

## ԿՐՈՆԱԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՌԱՇԵՐՏԸ ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ.

karine.arakelyan.2016@mail.ru

XX դարասկզբի արևմտահայ տաղանդաշատ քնարերգու Միսաք Մեծարենցի ստեղծագործության բառապաշարում առկա կրոնաեկեղեցական բառաշերտը ինքնին հույզերի կամ զգացումների անվանումներ չի ներառում, հուզաարտահայտչական գունավորում չունի, սակայն խոսքային համապատասխան միջավայրում ձեռք է բերում ոճական անգնահատելի արժեք և գործուն մասնակցություն՝ բանաստեղծական պատկերի կերտման գործում:

Մ. Մեծարենցի բնութենապաշտ հեղինակ լինելու մասին շատ է խոսվել ու գրվել: Նրա բանաստեղծությունների մի ստվար մասը նվիրված է բնության նկարագրությանը: Սա ինքնանպատակ չի եղել: Քրոջ ամուսնուն՝ Վարդան քահ. Արսլանյանին ուղղված նամակում Մ. Մեծարենցը բացում է փակագծերը՝ գրելով. ««Ծիածան»-ի առթիվ գրված նամակը անգամ մըն ալ կը կարդամ զգածվելով. «Ինչո՞ւ Տիեզերքի հոգիին հետ չես խոսակցիր» կը գրեք. բայց դիտելի է որ իմ գրեթե բոլոր քերթվածներս այդ մեծ խոսակցության կը նկրտին, որքան որ ալ իմինս չըլլա Աստուծո հետ դեմ հանդիման խոսակցություն, բայց ո՞չ ապաքեն Աստված ամեն տեղ է. Ձմրան Պարզ Գիշերվան մեջ հծծած աղոթքս ու Արևին ուղղած պաղատանքս իրեններուն, հետևաբար և իրեն համար էր. ի՞նչ երջանկություն, տերևի մը խարշափին մեջեն տեսնել տիեզերական զորության գաղտնիքը ու այդ փոքրիկ մասնավորեն մեկնիլ դեպ ի անհունը...»<sup>1</sup>:

Չնայած այս խոստովանությանը՝ Մ. Մեծարենցը երբեմն այնուամենայնիվ դիմում է Աստծո հետ բացահայտ կամ դեմ-հանդիման խոսակցության: Թե՛ այս, թե՛ այլ դեպքերում, իր ստեղծագործություններում առհասարակ նա կիրառում է կրոնաեկեղեցական բառաշերտին պատկանող բառեր, որոնք հիմնական գործառույթ են ստանձնում գեղարվեստական պատկերի կայացման մեջ: Մ. Մեծարենցի քերթվածքներում բառային այս միավորները դրսևորում են մեծ բազմազանություն, և դրանք պայմանականորեն կարելի է բաժա-

<sup>1</sup> **Միսաք Մեծարենց**, Երկերի լիակատար ժողովածու, Ե., 1981, էջ 288: (Այսուհետև այս գրքից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից):

### **Կրոնակեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

Նել մի քանի իմաստային խմբերի ա) Աստված, Աստվածամայր, հրեշտակներ, սրբեր, բ) կրոնական խորհրդանիշներ, գ) ծիսական առարկաներ, զգեստներ, պարագաներ, վայրեր և այլն, դ) աղոթք, փառաբանություն, կրոնական ապրումներ, զգացումներ, ե) մարդու հոգեկան աշխարհը բացահայտող բառեր, զ) եկեղեցական տոների անվանումներ, է) նշված բառախմբերին պատկանող բառարմատներից կազմված բազմաթիվ բաղադրություններ, ը) բառեր, որոնք ինքնին կրոնակեղեցական նշանակություն չունեն, սակայն կարող են այդպիսին ձեռք բերել խոսքին համապատասխան միջավայրում: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Նախ հիշենք *Աստված* բառը: Ինչպես նշում էր ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը, «հին և ընտիր բառ, որից ունինք մի քանի հարիւր ածանցներ»<sup>2</sup>:

Հայերենում այս բառն ունի բազմաթիվ հոմանիշներ, ինչպես՝ Տեր, Արարիչ, Ստեղծիչ, Հայր, Ամենակալ, Ամենակարող, Արքա երկնավոր, Թագավոր թագավորաց, Է, Ամենաստեղծ և այլն<sup>3</sup>:

Մ. Մեծարենցի չափաժողում հանդիպում ենք *Աստված* և *Տեր* բառերին՝ առաջինը յոթ, երկրորդը՝ տասնութ անգամ օգտագործված: Հետաքրքրական է, որ առաջին բառը հեղինակն օգտագործում է հիմնականում Արարչի մասին խոսելիս, երկրորդը՝ նրան դիմելիս: Վարդան քահ. Արսլանյանին ուղղված նամակում արտահայտած «ո՛չ ապաքեն Աստված ամեն տեղ է» գաղափարը Մ. Մեծարենցը բանաստեղծական լեզվով արտահայտում է «Ի՞նչ արբեցությանմ...» և «Հոգեհանգիստ» ոտանավորներում: Առաջին դեպքում հեղինակն Աստծուն տեսնում ու զգում է բնության բոլոր երևույթների, տարրերի ու մասնիկների մեջ և վայելում անասելի բերկրանք.

Ի՞նչ արբեցությամբ կ'ընդգրկե անի,  
Բոլոր ձևերն ու երանգներն ամեն,  
Բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն  
Իր մեջ անդդադարձ ծիածանումեն՝  
*Աստված' ծն' որ եկավ՝ չե՛ս գիտեր ուրկե՛...* (132)

Երկրորդ դեպքում փոքրիկ արարածի աչքերով է նայում Մեծին ու Անհունին, փնտրում իր Արարչին ու հավերժության գաղտնիքի բանալին.

<sup>2</sup> Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հատոր I, Ե., 1971:

<sup>3</sup> Հմմտ. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:

#### Առաքելյան Կ.

Թոչնակն հոգին տախտակներուն կը ծեծե,  
Ու պատերուն, ու հոգիիս վրդոված.  
Թոչնակն՝ հոգին կ'ուղղե անտես մեկ գիծե՝  
Անծանոթին մեջ որոնել իր *Աստված...* (165)

«Իսենթեր» եռամաս բանաստեղծության մեջ հեղինակը դարձյալ կիրառել է նշված բառը՝ այս անգամ տալով Արարչի շատ սեղմ ու դիպուկ մի բնութագրում. «*Աստվածն ա'ն է, ա'ն՝ որ արցունք է սրբեր...*» (189), որին հակադրվում է մարդկային անտարբերությունն ու փարիսեցիական կեղծավորությունը:

Ինչպես արդեն նշել ենք, *Տեղ* բառը Մ. Մեծարենցի չափածոյում հանդիպում է տասնութ անգամ, որից տասնվեցը նույն «Տո'ւր ինծի, Տեր...» բանաստեղծության մեջ, և բոլոր տասնութը որպես կոչական: «Տո'ւր ինծի, Տեր...»-ը կամ «Արդի մարդուն Հայր մեր»-ը այն քերթվածներից են, որոնք լավագույնս են արտահայտում Մեծարենց բանաստեղծի և անհատի խորին մարդասիրությունը: Սա ևս պատահական չէ, քանի որ քրիստոնեության հիմնաքարն, ի վերջո, սերն է. «Սէր ոչ երբէք անկանի, եթէ մարգարէութիւնք են, խափանեսցին, եթէ լեզուք՝ լռեսցեն, եթէ գիտութիւն՝ խափանեսցի» (Ա Կորնթ. Ժգ )<sup>4</sup>:

Իր նմանի հանդեպ անհուն սիրով ու նվիրումով տոգորված՝ Մ. Մեծարենցի քնարական հերոսը երկնային Տիրոջից հայցում է անանձնական ուրախություն՝ տալու, նվիրելու, բաշխելու, այլոց երջանկությամբ երջանկանալու, ամենքին բաժին հանելու համար, նաև վախենում, որ կարող է կիսատ թողնել իր առաքելությունը.

Տո'ւր ինծի, *Տեղ*, ուրախությունն անանձնական.  
Զանգակներո՛ւ պես զայն կախեմ ամեն դըրան՝  
Ու զերթ նարոտ ամեն դըրան զայն պըսակեմ... (172)

Հիշենք *Աստվածամայր* բառը, որը Մ. Մեծարենցն օգտագործում է *Աստվածամար* ձևով, նաև որպես բանաստեղծության վերնագիր: Այս բանաստեղծությունը այլաբանական պատկերներով աղոթք ու փառաբանություն է՝ ծոնված Սուրբ Կույսին: Ոտանավորի վերջին մասում կարդում ենք.

Գիշերին մեջ կ'իջնե դեռ ուղիսը լուսեղեն,

<sup>4</sup> Աստուածաշունչ մատեն, Նոր Կտակարան, Հայաստանի Աստուածաշնչային ընկերություն, 1997, էջ 182:

### **Կրոնակեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

Կաթիլ մը կաթ՝ ծովացած քու սրբութենեն.  
Ու տե՛ս, ահա՛, կը մանկանամ, *Աստվածամար*,  
Ու տե՛ս, ահա կը մանկանա՛մ գիշերին մեջ՝  
Ուր լըսեցի ես աստվածյան ձայնին վայրէջ՝  
Որ կը շաչեր աստվածարյալ հոգվույս համար: (97)

Բանաստեղծության մեջ առկա այլաբանական մեկնաբանություն ստացած հիմնական գաղափարն այն է, որ Աստվածամոր սրբության մի կաթիլը կարող է մեղքերից մաքրել, մանկան անմեղություն պարգևել քնարական հերոսին և նոր կյանքի կոչել նրան: Փաստորեն բանաստեղծության զարգացման ընթացքում հեղինակը հանգում է նույն գաղափարին, որ արդեն արտահայտել էր Գ. Նարեկացու Մատյանից քաղված բնաբանի միջոցով. «Ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ, կենաց ինձ զօրէ...»:

Հետաքրքիր հնարքի է դիմել հեղինակը «Ջրտուք» ոտանավորում: Նկարագրելով գյուղի բակի հնամենի ծառերով շրջապատված Սուրբ Աստվածածին եկեղեցին, Մ. Մեծարենցը, *Աստվածամոր վանք* բառակապակցությունը երկու անգամ չկրկնելու համար, այն կարծես բաժանում է բաղադրիչների՝ առաջին տողում գրելով *վանք* բառը, երկրորդում՝ *Աստվածամար*.

*Վանքին* բակը՝ կ'աղդթեն հսկա ծառեր տարորեն՝  
Որոնց տամուկ շուքին մեջ *Աստվածամարն* է կայներ... (94)

Փոխանցումն առկա է երկրորդ տողում, որտեղ *վանք* բառի բացակայությամբ պատկերն ավելի խորհրդավոր, խոսուն ու կենդանի է դառնում: Ընթերցողն էլ կարծես ավելի ակննատես է լինում և ոչ սոսկ կարդում:

Նույն երևույթին կարելի է հանդիպել նաև արձակում, երբ «Ջրին ծառը» փոքրիկ պատմվածքում հեղինակը գրում է. «Երբ հոսանքը պիտի անցնի կամուրջին տակեն... սպիտակ, գմբեթարդ *Աստվածամարը* կը ժպտի անույշ, կամուրջին տակեն՝ կը սահի անշշուկ, հանդարտած, և բարի *Աստվածամարը*, զինքը շրջապատող ամբարձուղեշ ու բազմաստեղ ծառերեն, սովերի խունկ մը՝ օրհնություն մը կը թոթվե...» (200):

Նմանատիպ է պարագան նաև «Երգը» բանաստեղծության դեպքում, որն ունի ինքնակենսագրական հենք: 1901 թ. Մ. Մեծարենցին դանակահարել էին, և նա բուժման նպատակով մեկնել էր Սվազ՝ Սուրբ Հակոբի վանքը: Բանաստեղծությունն ավարտվում է հետևյալ կերպ.

Բլրոյն կատարն *սուրբն* ալ քունի մեջ թաղվի

#### Առաքելյան Կ.

Մասնակցելով մարդուն երգին սև սուգի: (133)

Ակնհայտ է, որ *սուրբ* ասելով հեղինակը նկատի ունի Սուրբ Հակոբի վանքը, որ գտնվում էր Սվազում, բլրի վրա:

Իր քնարերգության մեջ Մ. Մեծարենցը չի օգտագործել *հրեշտակ* բառը, սակայն երեք անգամ կիրառել է *զվարթունք*, որը հոմանիշ է նախորդին, և այստեղից էլ ունենք Սուրբ Զվարթնոց տաճարը: Հետաքրքիր է, սակայն, որ բանաստեղծը բառին տալիս է նաև նոր իմաստ. զվարթունքներն այն հոգիներն են, որոնք այլևս մեզ հետ չեն, այլևս անմարմին են, լուսահոգի, փաստորեն նմանվել են հրեշտակների. «Լուսահոգի *զվարթունքներուն՝* Զորս արբեցուց այս իրիկուն Շաբաթօրյա խունկն ու արցունք...» (184):

Տեղին է հիշել Ավետարանի այն դրվագը, որտեղ Հիսուս խոսում է մեռելների հարության մասին. «Իսկ որ արժանի լինիցին այնմ աշխարհի հասանել եւ յարութեանն որ ի մեռելոց՝ ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին: Քանզի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշտակաց են, եւ որդիք Աստուծոյ, քանզի յարութեան որդիք են» (Ղուկ. Ի 36-37)<sup>5</sup>:

Իր ստեղծագործության մեջ Մ. Մեծարենցը կիրառել է ծիսական վայրեր, հագուստներ, առարկաներ նշանակող բազմաթիվ բառեր, հիմնականում ոչ ուղղակի, փոխաբերական իմաստներով: Հետաքրքրական է, որ մի շարք դեպքերում մեկ բանաստեղծության, անգամ մեկ բանատան մեջ օգտագործում է մի քանի այսպիսի բառեր, որոնք խիստ նպաստել են ասելիքի ամբողջացմանը: Հիշենք դրանցից մի քանիսը և նախ անդրադառնանք «Ձմրան պարզ գիշեր» բանաստեղծությանը, կամ ինչպես հեղինակն էր նշում. «Ձմրան Պարզ Գիշերվան մեջ հծծած աղոթքին»: Այս ոտանավորը հարուստ է կրոնական եզրակացական բառաշերտին պատկանող բառերով: Այն խորքի մեջ կարելի է հասկանալ որպես սրբության մեծ փափագ ու փնտրտուք: Իսկ ո՞րն է դեպի սրբություն տանող ճանապարհը: Մ. Մեծարենցն այն տեսնում է նաև արարչագործ բնության մեջ, երբ գրում է.

Կ'ուզէմ որ դադրին ձայներն այս պատիր,  
Ու *նեկտարիդ* դողն ըմպեմ ես անհագ.  
Կ'ուզէմ որ մեռնի՞ն տիվ ու ժամանակ՝  
Ու *դաբիրներուդ* իյնամ ծնրադիր... (29)

<sup>5</sup> Աստուածաշունչ մատենան, Նոր Կտակարան, էջ 86:

### **Կրոնակեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

Բանատունն ամփոփ փոխաբերություն է: *Դաքիր* նշանակում է. «Սրբութիւն Սրբոցի ներսի սենեակը, վայր աստուածխօսութեան»<sup>6</sup>, իսկ *նեկարը* «ըստ յուն. դիցաբանութեան՝ անմահութիւն պարգևող ըմպելիք, որ խմում էին Ոլիմպոսի աստուածները»<sup>7</sup>:

Հետևաբար արարչագործության մեջ պահված են թե՛ սրբության, թե՛ անմահության գաղտնիքները, և ապրելով բնության հետ կատարյալ ներդաշնակության մեջ՝ մարդն ի գորու է հասնել դրանց:

Հիշենք ծիսական առարկաներ, հագուստներ, վայրեր արտահայտող այլ բառերի կիրառության օրինակներ. *նափորը* - «Կը թովրոա զանգակին վանկը թռչուն, Ոսկի *նափորը* հագած շաբաթ իրիկվան Տիրանըվեր քղանցքին տակ դողդոջուն...» (165), *սրական* - «Տո՛ւր ինձի, Տե՛ր, ուրախությունն անանձնական. Ջայն ընդգրկած իտեալին ըլլամ *սրական*. Ջայն լաստ ըրած ես լույսերու նավո՛րդն ըլլամ...» (173), *ժամ* - «Սա իրիկունն ըլլայի ես, Լի զանգակին դողանջներովն երկնաճեմ, Խնկապատար, օծուն, ջահված *ժամի* պես Սա իրիկո՛ւնն ըլլայի ես...» (112), *կոչնակ* - «Գիշերին մեջ, ուր գետեզրին մոտեն լավող *կոչնակին* գանգյունը կը ծավալի սարե սար ու խորհրդավոր կերպով կ'օրրե զգացումները...» (195), *խունկ, բուրվառ* - «*Խունկի* ծարավ իմ հոգիս կը ծծե պահն այս հանդարտ, Ոսկեկրակ աչքերով *բուրվառներն* երբ կը ճոճին...» (48) այլն:

Մ. Մեծարենցի ստեղծագործության մեջ քիչ չեն աղոթք, փառաբանություն, հոգևոր-կրոնական տարբեր ապրումներ ու զգացումներ նշանակող բառերը: Մարդ-Աստված հարաբերության մեջ միշտ չափազանց կարևորվել է աղոթքի դերն ու նշանակությունը, քանի որ այն անհատի խոսքն է, ուղղված իր Արարչին՝ փառաբանության, զղջումի, ապաշխարության, աղերսանքի կամ այլ բովանդակությամբ: Աղոթքի կարևորության մասին բազմաթիվ են վկայությունները Սուրբ Գրքում, իսկ Քրիստոս պատվիրում է ամեն ժամ աղոթել ու չձանձրանալ<sup>8</sup>:

Հայ եկեղեցական մատենագրության պայծառ ներկայացուցիչներից մեկը՝ Խոսրով Անձևացին, գրում էր. «Մանաւանդ և գոհասցուք միշտ զբարերար տեառնէ մերմէ եւ զամէնառատ բարձրագոյն շնորհաց նորա: Կանխես-

<sup>6</sup> Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. I, Ե., 1971:

<sup>7</sup> Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. III, Ե., 2010:

<sup>8</sup> Հմմտ. Աստուածաշունչ մատեն, Նոր Կտակարան, էջ 83:

#### Առաքելյան Կ.

ցուք յաղօթս առ նա յարաժամ՝ սիրով եւ փափագանօք. օրհնեսցուք անլռելի ձայնիւ զմեծագոյն շնորհք մարդասիրին Աստուծոյ առ արարածս իւր»<sup>9</sup>:

*Աղոթք* և *աղոթել* բառերը Մ. Մեծարենցը գործածում է թե՛ ուղղակի, թե՛ փոխաբերական իմաստներով: Չմոռանանք, որ շատ հաճախ իրենց անվանողական, ուղղակի իմաստներով բառերն ստեղծում են հիացմունքի արժանի պատկերներ, արվեստի գլուխգործոցներ, ինչպես.

Նրբանցքին մեջ մայրս *աղոթք* մը կը հծծե,  
Կ'ապրեցնե սիրելիներն իր ամեն... (165)

Սակայն արդյո՞ք *աղոթքն* ու *աղոթելը* միայն մարդուն են հատուկ, և արդյո՞ք բնությունն ամբողջությամբ *աղոթք* ու փառաբանություն չէ: Ահա «Կապույտ հաճումներ» բանաստեղծության մեջ կարդում ենք.

Շրջանն ըրե մարմանդներուն ու ծաղկածին հովիտներուն,  
Անցիր տըմույն ըստվերներու մեջ *աղոթող* անտառներեն... (84)

Հիշենք *պակուցում* բառը, որ նշանակում է «ահարկութիւն, երկիւղ...»<sup>10</sup>: Բառ, որն ավելի հաճախակի գործածություն է ունեցել միջնադարյան մատենագիրների երկերում, ինչպես Սուրբ Գրիգոր Նարեկացու Մատյանում. «Ի քո սպառնալեաց ահիդ պակուցման Սաւառնին սերոբէք, ամփոփին քերոբէք...»<sup>11</sup>: Մ. Մեծարենցը ևս այս բառն օգտագործել է աղոթական միջավայրը պատկերելիս «Կիրակմուտք» բանաստեղծության մեջ, որի բնաբանը՝ «...Եկեալքս ի մտանել արեգականն տեսաք զլոյս երեկոյիս...», վերցված է «Երգ Կիրակմտից» ժամերգից և շարունակությունն է «Լոյս զուարթ» շարականի: Ժամանակակիցները հիշում էին, որ շաբաթ երեկոները դպրոցի տղաներին, կարգ շարելով, ուսուցիչների հսկողությամբ առաջնորդում էին եկեղեցի: Փաստորեն հեղինակի «Կիրակմուտքը» կրում է այդ օրերի տպավորությունը:

Կարդանք բնագիրը.

*Պակուցում* մը հոգեգրավ հոն կը թողու զիս անթարթ,  
Կը զգամ համբույրն իմ հոգիս պարուրող բիլ մարմաշին... (48)

<sup>9</sup> **Խոսրով Անձեազի**, Մեկնութիւն ժամանակագրութեան, Կ. Պոլիս, 1840, էջ 65:

<sup>10</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Ե., 1981:

<sup>11</sup> **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, Ե., Մուղնի հրատարակչություն, 2003, էջ 534:

### **Կրոնակեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

Հետաքրքիր օրինակների ենք հանդիպում եկեղեցական տոների անվանումների՝ մասնավորապես *Ջալիկ* բառի կիրառության դեպքում: Այն առկա է «Կ'երթա արևն իր Ջատիկին» բանաստեղծության մեջ, որտեղ արեգակը նմանեցված է նախշուն ներկված հավկիթի.

Կարմիր, նախշուն հավկիթի պես  
Կ'երթա արևն իր *Ջալիկին*... (124)

Այս համեմատությունից, որն ուղեկցվել է նվազաբանությամբ, արեգակն ամենևին չի տուժել, այլ, նմանվելով իրենից չափերով այդքան փոքր առարկայի, ընդհակառակը, դարձել է մարդուն ավելի մոտ ու հարազատ, օժտվել յուրօրինակ նրբությամբ ու քնքշությամբ: Սրանով հեղինակը ցույց է տվել, որ Ս. Հարության տոնին ուրախանում, ցնծում են ոչ միայն մարդիկ, այլև ողջ տիեզերքը, որտեղ արևը, միգուցե, մի նախշուն, կարմիր հավկիթ է:

Կրոնակեղեցական բառաշերտի մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ կրոնական խորհրդանիշներ արտահայտող բառերին: Քրիստոնեական կրոնի գերագույն խորհրդանիշը Խաչն է, այն խորհրդանշում է Քրիստոսի փրկագործությունը, երկրային կյանքի անցած ճանապարհը, իսկ Նրա հետ նաև, համաձայն տերունական խոսքի. յուրաքանչյուր ճշմարիտ քրիստոնյայի, «Եւ որ ոչ առնու զխաչ իւր եւ գայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի»<sup>12</sup>:

«Խունկ և արցունք» բանաստեղծության մեջ խաչն այն սրբազան առարկան է, որը կարելի է շոշափել, համբուրել, օգտագործել բարեպաշտական նպատակներով, ինչպես.

Աչքերուն՝ որ զինք կը դիտեն  
Կիրակմուտքի խունկին ատեն՝  
Ձեռքն անընդհատ կու տա *խաչն* հին... (184)

«Խենթեր» բանաստեղծությունը նկարագրում է հասարակությունից վտարված մարդու՝ «խենթի» և նրա մերձավորների տանջանքները, ապրած ցավն ու դառնությունը, և այս դեպքում խաչը խորհրդանշում է տառապանք.

*Խաչ՝* որուն ցավն ու ըստվերները գորշգույն  
Կ'անդրադառնան՝ ինչպես մըռայլ ուրվական՝  
Լուրթ ջուրերուն վրա ծով հոգվույն մայրական,  
Մթնշաղիին բոցերուն մեջ վարդագույն (187):

---

<sup>12</sup> Աստուածաշունչ մատեան, Նոր կտակարան, էջ 11:

#### Առաքելյան Կ.

Հիշենք նաև կրոնական արարողություններ նշանակող բառերի մասին: Հայ Առաքելական եկեղեցում կատարվում է ինը ժամերգություն, իսկ կիրակի և տոն օրերին տեղի է ունենում գլխավոր պաշտամունքային արարողությունը, մատուցվում է Սուրբ Պատարագ: Այս բառն ինքնին նշանակում է նվեր, ընծա: Իսկ կրոնական իմաստով. «ի նոր օրէնս՝ Է Անարին և անծախելի զոհ և զոհագործութիւն՝ կենդանի և կենդանարար մարմնոյ և արեանն Քրիստոսի. որոյ և կատարումն կամ պաշտօնն կոչի Քահանայազործութիւն կամ Պատարագ»<sup>13</sup>:

Պատարագ բառը Մ. Մեծարենցի չափածոյում հանդիպում է հինգ անգամ՝ յուրաքանչյուր դեպքում իմաստային հետաքրքիր նրբերանգներով օժտված, ինչպես նաև արծակում: «Սիրերգ» բանաստեղծության մեջ այն նշանակում է նվեր. «Ճառագայթի պես ոսկեվարս ու նրբին, Երբոր ճամբեն կ'անցնի հըպարտ, լուսարագ, Բան մը որտես կ'ըլլա բոցին պատարագ Իր աչքերուն՝ ուր կը մոռնամ ես արփին...» (74): «Անդարձ» բանաստեղծության մեջ վերոհիշյալ բառը նշանակում է զոհ. «Մառախուղով կը լենա հիր շրջագիծն երազիս, Ուր ամբարձիկ մարմինիդ հըպարտ շուշանն է կեցեր. Հոգվոյդ կարմիր կարոտին, ա՛հ, պատարա՛գ ըրե զիս...» (92): «Առտվան արևին մեջ» ոտանավորում հեղինակը դիմել է փոխաբերության, որի հիմքում բնության գեղեցկությունների և հոգևոր գեղեցկությունների, այս դեպքում Պատարագի երգեցողության նմանությունն ու համեմատությունն է. «Ու մարմանդները ճանճկեն, ու սարերը կապտորակ Եղկ հծծյունով մը կ'երգեն Լուսին ոսկի պատարագ...» (83): Գրեթե նույն գաղափարը Մ. Մեծարենցն արտահայտում է Տիգրան Գասալյանին ուղղված նամակում, երբ գրում է. «Որքա՞ն կ'ուզեի խմել հիմակ արևակեզ «թավաճաղիկ»-ին բարկ բույրը, ու զույգ ձեռքերուս մեջ բռնել «մոմաճաղիկ»-ներ բոլոր ժամվոր բլուրներուն ու դաշտերուն հետ՝ այն պատարագին մեջ՝ որ արևներով կենսավետ տիեզերքին շարժումն ու ուժը կը կազմեն» (287):

Իր վաղ շրջանի բանաստեղծություններից մեկը Մ. Մեծարենցն անվանել է «Արևագալ»: Արևագալն առհասարակ մեր իրականության ու գրականության մեջ միշտ է գովերգվել հատուկ սիրով ու ջերմությամբ, վկան՝ մեր եկեղեցու Արևագալի ժամերգությունը, որտեղ Քրիստոսի հարությունը նույնացվում է արևի ծագմանը, և Արևագալի չքնաղ շարականները, ինչպես. «Լո՛յս, արարիչ լուսոյ, առաջին լո՛յս, բնակեալդ ի լոյս յանմատոյց Հայր երկնաւոր, ի դա-

<sup>13</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Ե., 1981:

### **Կրոնակեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

սուց լուսեղինացն օրհնեալ. ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա՛ ի հոգիս մեր զլոյս քո իմանալի»<sup>14</sup>:

Իր բանաստեղծության մեջ հեղինակը դիմում է դիմառնության հնարան-քին՝ շնչավորելով բնությունը և նրա միջոցով փառաբանելով արարչական լույսը, որ գալիս է ծագելու աշխարհի վրա և մարդու հոգում: Խավարը փոխվում է լույսի, բացվում է առավոտը՝ բարին ավետելով մարդկանց.

Հորիզոնեն վար լույսի պար մը կ'իջնե,  
Ընդելուզված՝ ճաճանչներով ոսկեհյուս.  
Շուտ կ'անհետի մութն ու խավար կու տա խույս,  
Աշխարհ արփվոյն հուր գալուստը կ'ողջունե... (18)

Այստեղ ուզում ենք հիշել մեր մեկ այլ մեծ բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի քառյակներից մեկը, որտեղ ևս փոխաբերական իմաստներով օգտագործվում են թե՛ արարողությունների անվանումները, թե՛ կրոնակեղեցական շերտին պատկանող այլ բառեր, որոնք չորս տողի մեջ և՛ ամբողջացրել են ասելիքը, և՛ օգնել ընթերցողին ներթափանցելու բանաստեղծի վեհ կոչման անտեսանելի խորքերը.

Իմ կնունքին երկինքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.  
Սարը եղավ կընքահայրըս, ցողը՝ մյուռոն կենսավետ,  
Ու կընքողըս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ<sup>15</sup>:

Մ. Մեծարենցի ստեղծագործության մեջ առկա են նաև կրոնակեղեցական բառաշերտին պատկանող բառարմատներից կազմված բազմաթիվ բառերի ինքնատիպ կիրառություններ: Նախ՝ հիշենք *Աստված* բառով կազմությունները: Չափաժողում դրանք են *աստվածաբոցն*, *աստվածաձայն*, *աստվածարյալ*, *աստվածյան* բառերը՝ յուրաքանչյուրը մեկական անգամ օգտագործված: Դրանցից երկուսի՝ *աստվածյանի* և *աստվածարյալի* կիրառությունը տեսանք «Աստվածամար» բանաստեղծության մեջ: Այժմ խոսենք *աստվածաբոցն* բառի կիրառության մասին, որ բացատրվում է իբրև. «Աստվածային բոցով վառվող»<sup>16</sup>: Այս բառը Մ. Մեծարենցն օգտագործել է «Երգը» բանաստեղծության մեջ, որը նրա քնարերգության մեջ խիստ առանձնանում է բովանդա-

<sup>14</sup> Խորան լուսո, Երգ Արևագալի, Ե., 1993, էջ 15:

<sup>15</sup> **Հովհաննես Թումանյան**, Երկեր, հ. I, Ե., 1958, էջ 157:

<sup>16</sup> **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976:

#### Առաքելյան Կ.

կային առումով. և առաջին անգամ տպագրվել է բանաստեղծի մահից հետո, 1909 թ. «Ազդակում»:

XIX դարավերջին և XX դարասկզբին արևմտահայ իրականության մեջ հայկական մեծ ու փոքր կոտորածները դարձել էին «սովորական» երևույթ և հաճախ իրենց արտացոլումն էին գտնում գրականության մեջ, ինչը միանգամայն բնական է: Մ. Մեծարենցի քնարական հերոսը, որը նախճիրի ականատեսն է, վարագույրի հետևում է պահում սպանդի ահազարհուր տեսարանները այն դեպքում, երբ ժամանակի մյուս բանաստեղծներից շատերը՝ Դ. Վարուժանը, Ռ. Սևակը և հատկապես Սիամանթոն այդ ամենը նկարագրում էին ողջ թափով ու ուժով: Սակայն արդյո՞ք դա իրավունք է տալիս ենթադրելու, որ Մ. Մեծարենցի «Երգը» որևէ կերպ զիջում է նշված հեղինակների ստեղծագործություններին: Մ. Մեծարենցը տեսնում ու զգում է արյունը, զգում է ամբողջ էությանը, բոլոր զգայարաններով: Արյունը դառնում է խորհրդանիշ, անմեղ նահատակների խորհրդանիշը, դառնում է կենդանի, խոսում քնարական հերոսի, նրա միջոցով և ընթերցողի հետ: Բանաստեղծն զգում է արյան համը, հոտը, գույնը ամեն իրի ու երևույթի մեջ: Ատոմ Յարճանյանի սարսռազդու, սակայն ինչ-որ տեղ միագիծ պատկերին («Եվ բանաստեղծի աչվրներս արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն է որ կըտեսնեն...»<sup>17</sup>) հակադրվում է մեծարենցյան սիմվոլիկ բազմաշերտ պատկերը: Եթե Սիամանթոն ամբողջությամբ տեսնում է, ապա Մ. Մեծարենցն ամբողջությամբ ապրում է, ինչն ի վերջո նրան հանգեցնում է միակ ճշմարտացի լուծմանը՝ սրբազան վրեժի գաղափարին:

Քո՛ւյր, մոտեցո՛ւր իմ ձեռքին  
Աստվածաբոցն հրրացան,  
Ձի ամեն՝ն բան ինձ կրկին  
Կը հիշեցնե վրե՛ժն արյան... (190)

Կարծում ենք՝ թե՛ իմաստային, թե՛ գեղագիտական առումով նշված բառի դերը դժվար է թերագնահատել:

Բերենք նմանատիպ կազմությունների և դրանց կիրառությունների քննադրային այլ օրինակներ. *Մյուռոնհոպ* - «Ձյունին վրայեն կ'երթաս, ա՛րև ձյունածաղիկ, Մնջելով ունկն ի վար աղոթքդ անծանոթ, Ու շփելով շուրթիս սյուք մը *մյուռոնհոպ...*» (180), *խաչանիշ, օրհնական* - «*Խաչանիշ* մը կ'ըլլա թոչնիկն՝ *օրհնական* Այս վայրկյանին՝ զոր կ'արծաթե լուսինկան՝ Կ'ողջագու-

<sup>17</sup> Յեղին սիրտը, արևմտահայ բանաստեղծություն, Ե., 1991, էջ 256:

### **Կրոնակեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

րե իր ծոցին մեջ սատափե» (166), *խնկապարար* - «Սա իրիկո՛ւնն ըլլայի ես, Լի զանգակին ղողանջներովն երկնաճեմ. *խնկապարար*, օծուն, ջահված ժամի պես Սա իրիկո՛ւնն ըլլայի ես...» (112) և այլն:

Մ. Մեծարենցի ստեղծագործության մեջ քիչ չեն այնպիսի բառերը, որոնք ինքնին կրոնական իմաստ չունեն, սակայն այն ձեռք են բերում խոսքային համապատասխան միջավայրում: Հիշենք *արցունքը*, որ պատկանում է բառապաշարի չեզոք շերտին: Հեղինակն այս բառն օգտագործել է տարբեր առիթներով, մասնավորապես «Խունկ և արցունք» բանաստեղծության մեջ: Այս ոտանավորը գեղարվեստական անդրադարձ է կիրականամտի տնային խնկարկությանը, ինչի հիմքում ժողովրդական մի հավատալիք է, որի մասին հեղինակը գրում է բանաստեղծության ծանոթագրության մեջ: Համաձայն դրա. «Կիրակնուտքի տնային խնկարկությանց միջոցին «լուսեղեններ»-ը իրենց սիրելիներուն կայքերը կ'երթան, ակնկալու աչքերով, ստանալու համար իրենց ընծայված խունկն ու արցունքը, կամ հուսավրեպ, գլխիկոր ե՛տ դառնալու համար...: Ժողովրդական հավատալիքը կ'ըսե ուրեմն, և ո՛վ պիտի չըսեր թե հիշատակը կը վերապրեցնե հոգիները: Եվ ի՞նչ ավելի հիշատակելի հիշատակարան՝ քան աստղաշիթ աստվածատուր արցունքն ու հոգեպարար վերամբարձ խունկը» (184):

Աղոթքի՝ արցունքով ուղեկցվելու կարևորության մասին բազմիցս նշել են Եկեղեցու Հայրերը, ինչպես Սուրբ Գրիգոր Լուսավորիչը. «Եւ ճնշեալ զմիտսն ի զոջումն արտասուաց ի յիշատակս աւետեաց խնամալից պաղատանօք հեղուլ զարտասուս շնորհալիցս առ ի մաքրութիւն մտաց և մարմնոց, որ զանմաքրութիւն ստացեալ ունէին զչար և զաղտեղի ցանկութիւնս: Զի արտասուք զմեղացն հարուածոց դառնութիւն սրբեն և ողջացուցանեն...»<sup>18</sup>:

Իսկ Նեղոս Սինայեցին գրում էր. «Ամէն խնդրուածքից առաջ յաջողության համար քեզ պէտք կլինեն արտասուքներ, քանզի քո Տէրը շատ է ցանկանում արտասուալից աղօթք ընդունել քեզանից»<sup>19</sup>:

Աղոթքի և արցունքի միախառնման և միաձուլման արդեն գեղարվեստական պատկերը գտնում ենք Մ. Մեծարենցի բանաստեղծության մեջ.

Շիր մ'արցունքով՝ կաթիլ մը խունկ  
Սրբութիւն մեջ կը ցանե

<sup>18</sup> Սրբոյ Հօրն Մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում Ճառք Լուսաւորք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1894, էջ 210:

<sup>19</sup> Աղօթագիրք, «Գանձասար» մատենաշար, Ե., 1992, էջ 40:

#### Առաքելյան Կ.

Մայրս՝ որ կ'անցնի անտես դռնե,  
Եվ երջանիկ՝ կը դընե ունկ  
Անդրաշխարհեն եկող ձայնին... (184)

Հիշենք *ուրախություն* բառը, որը նույնպես կրոնական իմաստ չունի: Մ. Մեծարենցն այն բազմիցս գործածել է իր անվանողական, առաջնային նշանակությամբ, սակայն «Տո՛ւր ինձի, Տեր...» բանաստեղծության մեջ այս բառը *անանձնական ուրախություն* կապակցության մեջ ձեռք է բերել ինքնատիպ, կարելի է ասել, խորհրդանշական իմաստ՝ բացահայտելով քրիստոնյա անհատի հոգևոր ապրումներից մեկը՝ սերը իր նմանի հանդեպ: Այդ սերը բանաստեղծության մեջ արտահայտվել է բազմաթիվ փոխաբերական պատկերների միջոցով, ինչպես.

Տո՛ւր ինձի, Տե՛ր, *ուրախությունն* անանձնական.  
Ու բաղխեմ զայն սրտիս ժայռին՝ իբրև մական՝  
Որ բղխեցնե ջուրն աներկմիտ երանության... (173)

Կարծում ենք, որ այս այլաբերության հիմքում անդրադարձն է Հին Կտակարանի մի դրվագի, երբ Եգիպտոսից դուրս եկած և անապատում դեգերող հրեա ժողովուրդը տրտնջում է և Մովսես մարգարեից խմելու ջուր ուզում: Այդ ժամանակ «... ասէ Տէր ցՄովսէս, Երթ առաջի ժողովրդեանդ, եւ առ ընդ քեզ ի ծերոց ժողովրդեանդ, եւ զգաւազանն քո որով հարեր զգետն՝ առ ի ձեռին քում, եւ երթիցես: Եւ ես կայցեմ անդ յառաջագոյն քան զքեզ ի վերայ վիմին ի Քորեբ. եւ հարցես զվէմն եւ ելցէ ի նմանէ ջուր, եւ արբցէ ժողովուրդդ» (Ելք Ժը, 5-6)<sup>20</sup>:

Մ. Մեծարենցի քնարական հերոսի դեպքում գավազանն անանձնական ուրախությունն է, որը, բախվելով քարեղեն կարծրացած սրտին, այն փափկացնում է և դուրս բերում «աներկմիտ երանության ջուրը»՝ այսինքն սերը, որը մարդու համար նույն կարևորությունն ունի, ինչ ջուրը՝ անապատում գտնվողի համար:

Եթե փորձենք ամփոփել այս համառոտ քննությունը, ապա պիտի արձանագրենք, որ կրոնակեղեցական շերտին պատկանող բառերը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ ունեն զգալի դեր ու նշանակություն: Նրանց դերը գեղարվեստական պատկերի կայացման գործում մեծ է թե՛

<sup>20</sup> Աստուածաշունչ մատեն, Հին Կտակարան, էջ 76:

**Կրոնաեկեղեցական բառաշերտը Միսաք Մեծարենցի ստեղծագործության մեջ**

իմաստային, թե՛ ոճական առումներով: Նաև այս միավորների շնորհիվ է խոսքն առավել օժտվում քնարականությամբ, հոգեբանական հագեցվածությամբ, իսկ շատ հաճախ նաև փիլիսոփայական խորը ենթատեքստով:

**THE RELIGIOUS-ECCLESIASTIC VOCABULARY IN THE  
WORKS OF MISSAK METSARENTS**

ARAKELYAN K.

**Summary**

In the works of Missak Metsarents, words belonging to the religious-ecclesiastic vocabulary have a special stylistic role in the process of poetic image creation. The use of these lexical units, endows his poetry with a special kind of lyricism and psychologism, enhancing the philosophical motifs of his works

**РЕЛИГИОЗНО-ЦЕРКОВНАЯ ЛЕКСИКА В ТВОРЧЕСТВЕ  
МИСАКА МЕЦАРЕНЦА**

АРАКЕЛЯН К.

**Резюме**

В творчестве Мисака Мецаренца религиозно-церковная лексика играет особую стилистическую роль при создании поэтического образа. Обращение к данной лексике придает его поэзии особый лиризм и психологизм, усиливая философские мотивы его творчества.